**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/14104-2025

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը (Կ-993-24.12.2024,06.02.2025-ՖՎ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք հետևյալը՝

1. «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքը, առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության» բառերը փոխարինել «պետական սեփականություն հանդիսացող» բառերով:
2. «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ Ծառայությունը իրականացնում է վարչապետին այլ իրավական ակտերով վերապահված վերահսկողական լիազորություններ: Այս առումով հարկ է նշել, որ լիազորությունների շրջանակը պետք է սահմանված լինի օրենքներով, իսկ «այլ իրավական ակտեր» ձևակերպումն իր մեջ բացի օրենքներից ներառում է նաև ենթաօրենսդրական իրավական ակտեր: Հաշվի առնելով վերոգրյալը՝ «իրավական ակտերով» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրենքներով» բառով:

3. «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի համաձայն՝ Սույն օրենքով սահմանված նպատակով Ծառայությունը պետական վերահսկողության շրջանակներում և սույն օրենքով սահմանված կարգով՝

/…/

3) տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է վերահսկողություն տրամադրված սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների կառավարման օրինականության կամ դրանց տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով.

/…/

8) տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական կամ համայնքային հիմնարկներում իրականացնում է վերահսկողություն՝ գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.:

Հաշվի առնելով վերոգրալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտություն կա համապատասխան լրացումը նախատեսել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում:

Ուստի առաջարկում ենք նախագծերի փաթեթն ավելացնել նոր նախագծով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ՝

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասում «կարգով» բառից հետո լրացնել «, իսկ

տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ